

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
փետրվարի 17-ի նիստի N 6
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
Ինովացիոն տնտեսության
ձևավորման մեկնարկային
ռազմավարության

1. Ներածական

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ՀՀ կառավարության, ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության, մոտեցումները և Հայաստանում ինովացիոն խթանման և ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը:

Հայաստանի գիտելիքահենք տնտեսության ստեղծման և ինովացիայի աջակցման ազգային համակարգի ձևավորմանն ուղղված ռազմավարության հայեցակարգը ենթադրում է հիմնախնդիրների առավել խորքային ուսումնասիրություն և սոցիալ-տնտեսական հարակից ոլորտների, մասնավորապես, գիտության, կրթական, հարկաբյուջետային, արդյունաբերական և արտահանման խրախուսման քաղաքականությունների ինտեգրում մեկ ամբողջական համակարգում:

Ներկայումս ընթացքում են Հայաստանի արտահանման խրախուսման և արդյունաբերական քաղաքականության մշակման աշխատանքները, որոնց հետ միասին սույն ռազմավարությունը պետք է տնտեսական զարգացման համալիր հայեցակարգի և ռազմավարության մաս կազմի: Հետևաբար ինովացիոն տնտեսության ձևավորման ռազմավարության հայեցակարգի վերջնականացումը պետք է իրականացվի վերոհիշյալ ռազմավարությունների հետ միասին:

Այդ իսկ առումով, ինովացիոն համակարգի ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը կոչված է ներկայացնելու Հայաստանում ինովացիայի աջակցման համակարգի ձևավորման ռազմավարության տեսլականը, առաջին փուլի հիմնական ռազմավարական նախաձեռնությունները, աջակցման գործիքակազմը և ակնկալվող արդյունքները:

Արագընթաց գլոբալացումը և տեխնոլոգիական առաջընթացն անհրաժեշտություն են դարձնում ռազմավարության պարբերական վերանայումը և համապատասխանեցումը արտաքին և ներքին միջավայրերի փոփոխված պահանջներին: Այդ իսկ առումով, ինովացիայի ռազմավարությունը դիտվում է որպես դինամիկ գործընթաց և նախատեսվում է դրա պարբերական վերանայում:

2. Ինովացիոն համակարգի ձևավորման հիմնադրույթներ

1. Ինովացիոն համակարգի ձևավորումը պետք է լինի ուղղված դեպի շուկայական պահանջարկը:
2. Նորարարական տնտեսության ձևավորումը ենթադրում է համակարգային մոտեցում և առանձին իրականացված նախաձեռնությունները, որպես կանոն, կրերեն ռեսուրսների վատնման: Այն ենթադրում է սերտ համագործակցություն ինչպես պետական տարբեր կառույցների, այնպես էլ մասնավոր և գիտակրթական ոլորտների միջև:
3. Պահանջարկի յուրաքանչյուր աղբյուր ենթադրում է ինովացիոն համակարգի յուրահատուկ տարրերի խմբի զարգացում:
4. Մարդկային կապիտալը կենտրոնական դեր ունի գիտելիքահենք տնտեսության կառուցման գործում:
5. Ռազմավարության հաջողության նախապայմաններից է նախաձեռնությունների մասշտաբայնության, ժամկետայնության, հերթականության համապատասխանությունը նպատակադրմանը:
6. Սփյուռքի ակադեմիական և բիզնես ներուժի օգտագործումը կնպաստի Հայաստանում ինովացիոն կարողությունների զարգացման և միջազգային գործընթացներին ներգրավման արագացմանը:
7. Պետության ներդրումը պետք է զգալի լինի ռազմավարության իրականացման նախնական փուլում և այնուհետև կրճատվի՝ փոխելով նախաձեռնությունների կիզակետը:
8. Հայաստանի տեսանկյունից առավել իրատեսական դիրքավորումը գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների հետագոտությունների և մշակումների (ՀուՄ) կենտրոն դառնալն է:

3. Ներկա իրավճակը

2006թ.-ին սահմանվեցին Հայաստանում ինովացիոն գործունեության աջակցման իրավական հիմքերը Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարական մի շարք որոշումներով: Մշակվել և հաստատվել է Էլեկտրոնային հասարակության հայեցակարգը:

Հայաստանում արդեն իսկ ստեղծվել և գործում են մի շարք մասնավոր և պետական բիզնես և կրթական կառույցներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցում են ինովացիոն գործունեությանը և ինովացիոն ընկերություններին (Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Գյումրի SS կենտրոն, Վիասֆեր Տեխնոպարկ, հետազոտական համալսարաններ և այլն): Ընթացքում են նաև մի շարք հանրակրթական ծրագրեր, որոնք իրականացվում են համագործակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ընկերությունների կողմից, ինչպիսիք են Մայրքրոստֆթը, ԷյչՓի-ն և Ինթելը-ը:

Սակայն այսօր խնդիր կա սահմանելու ինովացիոն տնտեսության ձևավորման միասնական տեսլական և մշակելու համապարփակ ռազմավարություն, որը կինտեգրի գործող և մեկնարկվող նախաձեռնությունները մեկ միասնական համատեքստում: Դա կնպաստի կատարվող քայլերի առավել նպատակաուղղված դարձնելուն և արդյունավետ կիրարկմանը:

4. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ

ՏԵՍԼԱԿԱՆ

Հայաստանի ինովացիոն քաղաքականության ռազմավարական նպատակն է Հայաստանը դարձնել տեխնոլոգիական ՀուՄ գլոբալ կենտրոն՝ ձևավորելով և զարգացնելով ինովացիոն ազգային համակարգի համապատասխան բաղադրիչները:

ՀՈՐԻՋՈՆ 1. Մինչև 2014թ.

Այս փուլում նախաձեռնությունները ուղղված են երկրում առկա կարողությունների զարգացմանը և բացերի լրացմանը:

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանն ուղղված բոլոր հիմնական նախաձեռնությունների մեկնարկը նախատեսվում է հենց այս փուլում:

Այս փուլի արդյունքում ակնկալվում է զարգացնել բազային կարողությունները, որոնք նախապայման են ռազմավարության հետագա քայլերի իրականացման համար:

ՀՈՐԻՋՈՆ 2. Մինչև 2017թ.

Երկրորդ փուլում նախատեսում է առաջին փուլում մեկնարկված նախաձեռնությունների մասշտաբայնացում և կարողությունների հզորացում:

Զարգացած կարողությունները նպաստելու են գիտելիքի փոխանցման և ցանցային ներգրավվածության ինտենսիվացմանը:

Ռազմավարական նախաձեռնությունների թիրախը պետք է լինի արդեն իսկ ձևավորված կարողությունների շրջանակում գլոբալ միջին չափի ընկերությունների ներգրավումը:

Ինչպես նաև ակնկալվում է համակարգաստեղծ նախաձեռնությունների ամբողջական գործարկումը:

ՀՈՐԻՋՈՆ 3. Մինչև 2020 թ.

Իրականացվում է ինովացիոն համակարգի արդյունքների լայնամասշտաբ առևտրայնացում գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան ներգրավման և որոշ հայկական տեխնոլոգիական ընկերությունների գլոբալացման միջոցով:

Ակնկալվող նպատակային ցուցանիշներ

Ընթացիկ և միջանկյալ նպատակային ցուցանիշներ դիտարկվում են յուրաքանչյուր նախագծի ցուցանիշները, որոնք սահմանված են համապատասխան ծրագրային և ռազմավարական փաստաթղթերում:

5. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ

ՏԵՍԼԱԿԱՆ
Հայաստանը, որպես
վերազգային
կորպորացիաների
ՀուՄ կենտրոն

ՀՈՐԻՋՈՆ 1.
Մինչև 2014թ.
Առկա կարողությունների
զարգացում և բացերի
լրացում

Նպատակներ

- Ինովացիոն ազգային համակարգի ձևավորում և ամբողջականացում

Նախաձեռնություններ (13 հիմնական)

- Իրավական բարեփոխումների նախաձեռնում (որակի համակարգ, մտավոր սեփականության իրավունքներ, ազատ տնտեսական գոտիներ և այլն)
- Նորարարության աջակցման ֆինանսական և ֆիզիկական ենթակառուցվածքների հիմնում և գործարկում (տեխնոպարկեր, գիտական կենտրոններ, վենչուրային հիմնադրամ, և այլն)
- Բիզնես կարողությունների զարգացում և բիզնես աջակցման հաստատությունների գործարկում (գաղափարների և նորարարության համաֆինանսավորման դրամաշտրիներ, վաճառքի ներկայացուցչություններ նպատակային շուկաներում)
- Կրթական համակարգի արդիականացում առանձին մասշտաբային նախագծերի միջոցով
- Համակարգաստեղծ նախաձեռնությունների մեկնարկ

ՀՈՐԻՋՈՆ 2.
Մինչև 2017թ.
Նախաձեռնությունների
մասշտաբայնացում և
կարողությունների հզորացում

Նպատակներ

- Մասնավոր հատվածում միջազգային ստանդարտների համատարած ներդրում
- Ճարտարագիտական կրթական համակարգի համապատասխանեցում միջազգային չափանիշներին
- Համակարգաստեղծ հաստատությունների ամբողջական գործարկում (Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա, Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն, Մինքրոտրոնային լույսի ազգային աղբյուր (Քենդոլ))
- Նորաստեղծ ինովացիոն ընկերությունների զարգացում
- Առկա ընկերությունների արդիականացում տեղական կամ ներմուծված տեխնոլոգիաների ներդրման միջոցով

Նախաձեռնությունների կիզակետ

- Միջին մեծության տեխնոլոգիական գլոբալ ընկերությունների ներգրավում
- Նախաձեռնությունների մասշտաբայնացում

ՀՈՐԻՋՈՆ 3.
Մինչև 2020 թ.
Հայաստանը ՀուՄ գլոբալ
կենտրոն

Նպատակներ

- Միջազգային ճանաչում ունեցող ճարտարագիտական համալսարան, Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
 - Հայաստանը դասվում է ՀուՄ գործունեություն իրականացման առաջնային երկրների շարքին, ինչպիսիք են այսօր Իսրայելը, Մինգապուրը, Իռլանդիան
 - Հայկական տեխնոլոգիական ընկերությունների գլոբալացում
- Նախաձեռնությունների կիզակետ**
- Առաջնակարգ տեխնոլոգիական գլոբալ ընկերությունների թիրախավորում
 - Հայկական տեխնոլոգիական ընկերությունների գլոբալացման աջակցում

6. Ինովացիոն ազգային համակարգ


Ինովացիոն համակարգի զարգացման ռազմավարությունը ենթադրում է համակարգային մոտեցման կիրառում:

Ռազմավարության շրջանակում նախաձեռնություններն հասցեագրվելու են ինովացիոն ազգային համակարգի հենասյուներին:

Որոշ նախաձեռնություններ իրենց բնույթով համակարգաստեղծ են և իրենց ընդգրկումով և մասշտաբայնությամբ վերաբերում են կամ ամբողջ համակարգին կամ մի քանի հենասյուների:

Այսօր, արդեն իսկ ընթացքում են կամ սպասում են մեկնարկի ինովացիոն համակարգի ստեղծմանը և բարելավմանն ուղղված նախաձեռնությունները, որոնք ներկայացված են հաջորդիվ:

Ինովացիոն ազգային համակարգի հենասյուները



7. Ինովացիոն մեկնարկային ռազմավարության շրջանակում նախաձեռնությունները

(ներառված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ իրականացվող հիմնական նախագծերը)

ՀԱՄԱԿԱՐԳԱՍՏԵՂԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա	ՏՀՏ և Էլ հասարակության նախաձեռնություններ
	Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն	Քենդլ նախագիծ

Իրավական դաշտ	Որակի ազգային համակարգի բարելավում	<i>Մշակույթ սեփականության իրավունքների համակարգի բարելավումների ռազմավարություն (մշակված է հայկեցակարգը, որը դեռևս հաստատված չէ ՀՀ կառավարության կողմից)</i>	
Կրթություն	Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիաներ (ԷլԷՆԻԷլ)	Հայ-ինդիական ՏՀՏ կրթական կենտրոն, «Միսկո» տարածաշրջանային ուսումնական կենտրոն	Կրթության և գիտության մրցունակության կենտրոն (Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ)
Ֆիզիկական ենթակառուցվածք	Ազատ տնտեսական գոտիներ «Արաբկիր» (Մերգեյան ինստիտուտ), «Մալաթիա» (Մարս գործարան)	Գյումրի տեխնոպարկ (Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամ)	
Ֆինանսական ենթակառուցվածք	Վեչյուրային հիմնադրամ	Գաղափարների և նորարարությունների համաֆինանսավորման դրամաշնորհներ	
Բիզնես կարողություններ	ԱՄՆ «Միլիկոնյան հովտում» վաճառքի գրասենյակ	Արտադրողականության բարձրացում և հստությունների զարգացում (միջազգային ստանդարտների ներդրման աջակցում)	Մայքրոսոֆթի նորարարական կենտրոն

8. Ինովացիոն ազգային համակարգի ձևավորման մեկնարկային ռազմավարության իրագործման արժեշղթան

Անկնկալվող վերջնական արդյունք

Գլոբալ տեխնոլոգիական անդրազգային ընկերություններ
(պատվերներ, մասնագյուղեր)

Գլոբալ տեխնոլոգիական հայկական ընկերություններ

Միջանկյալ արդյունք

Երիտասարդ տաղանդ (մարդկային կապիտալ)

Արդիականացված տեղական ընկերություններ

Ինտելեկտուալ սեփականություն (գիտելիք, տեխնոլոգիաներ)

Նորաստեղծ ընկերություններ, նոր ապրանքներ և ծառայություններ

Աջակցման գործիքակազմ

Գաղափարների և նորարարության համաֆինանսավորում

Արտահանման աջակցման գործիքներ

Բիզնես ինկուբացիա

Համակարգաստեղծ նախաձեռնությունների համաֆինանսավորում

Հարկային խթաններ ազատ տնտ. գոտիներում

Համակարգաստեղծ և միջավայր ձևավորող նախաձեռնություններ

Գիտահետազոտական գերազանցության կենտրոնների հիմնում (Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա, Ուուուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն, Քենդլ)

Ֆինանսական ենթակառուցվածքի ստեղծում(վենչուրային հիմնադրամ)

Տեխնոպարկերի, բիզնես ինկուբատորների և ազատ տնտ. գոտիների ստեղծում

Ճարտարագիտական կրթության բարելավվում

Որակի ազգային համակարգի բարեփոխում

9. Նախագծեր

Նախագիծ 1. * Ազգային գիտական լաբորատորիա (Համակարգաստեղծ)

Այս նախաձեռնությունը առանցքային նշանակություն ունի Հայաստանի գիտության և նորարարությունների զարգացման տեսանկյունից: ԵրՖԻ-ը վերածումը Ազգային գիտական լաբորատորիայի նպատակ ունի այն դարձնել միջազգային չափանիշներին համապատասխան գիտական գերազանցության կենտրոն, որը կունօրինի ազգային գիտական լաբորատորիաներին հատուկ՝ գիտական բազմազան ուղղություններով, ինչպես նաև միջդիսցիպլինար հետազոտությունների իրականացման համար նախատեսված եզակի գիտական ենթակառուցվածքը:

Նախագիծ 2.* Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն (Համակարգաստեղծ)

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հետ համատեղ մշակել է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայության «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում հիմնել Հայաստանի Հանրապետությունում ռադիոլոգոտոպների արտադրության համալիրից, պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆներով համալրված ախտորոշիչ կենտրոնից և ուռուցքաբանական կլինիկայից բաղկացած Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն: Ուռուցքաբանության կլինիկայի ամբողջական գործարկումը նախատեսվում է 2015 թվականին:

Նախագիծ 3. * Որակի ազգային համակարգի բարեփոխում (Համակարգաստեղծ)

Որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության նպատակը տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ազգային ընթացակարգերի արդիականացումն է:

Որակի ենթակառուցվածքի համակարգի բարեփոխումները կնպաստեն Հայաստանում

- տնտեսվարող սուբյեկտների վարչական ծանր բեռի կրճատմանը, որը պայմանավորվում է տեխնիկական կանոնակարգերով, հնացած ստանդարտներով և պարտադիր սերտիֆիկացման պահանջներով, որոնց գոյությունը չի հիմնավորվում Առևտրի համաշխարհային կազմակերպության ԱՏԽ համաձայնագրի պահանջների տեսանկյունից,
- սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը՝ միջազգային լավագույն փորձի ներդրման և արտադրանքի անվտանգության և սպառողների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկելու միջոցով,
- Նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը և հայկական արտադրության ապրանքների միջազգային մրցունակության բարձրացմանը:

Նախատեսվում է բարեփոխումներն ամբողջությամբ իրականացնել մինչև 2015 թվականը և մինչև 2020 թվականը հասնել միջազգային համընդհանուր ճանաչման:

Նախագիծ 4. *
Քենդլ նախագիծ
(Համակարգաստեղծ)

ՔԵՆԴԼ նախագծով նախատեսվում է Հայաստանում ստեղծել տարածաշրջանում (ԱՊՀ, Արևելյան Եվրոպա, Արևմտյան Ասիա) միակ գերժամանակակից (3.5 սերնդի) սինքրոտրոնային լույսի աղբյուր: Այն կունենա լայնամասշտաբ ազդեցություն ինչպես Հայաստանում կիրառական գիտահետազոտական ոլորտի զարգացման, այնպես էլ ամբողջ տնտեսության վրա: Այն նախատեսվում է հիմնել որպես կոնսորցիում երկրների կառավարությունների կողմից: Ժամկետներ. կառուցում 5 տարում, շահագործում 30-50 տարի

Նախագիծ 5. *
ՏՀՏ և Էլ
հասարակության
նախաձեռնություններ
(Համակարգաստեղծ)

ՏՀՏ և Էլ հասարակության նախաձեռնություններն իրականացվելու են Համաշխարհային բանկի «Հայաստանի էլեկտրոնային հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ծրագրի շրջանակում: Նախատեսվում է լայնաշերտ տարածաշրջանային հենացանցի ստեղծում պետության և մասնավոր հատվածի համագործակցության միջոցով, որի արդյունքում Հայաստանի մարզերը կկապվեն համացանցին գերարագ ենթակառուցվածքով: Միաժամանակ մեկնարկող «թվային քաղաքացի» և «համակարգիչ բոլորի համար» նախագծերը կնպաստեն ինտերնետի և էլեկտրոնային բովանդակության համատարած ներթափանցմանը մարզեր և հարթակ կիանդիսանսն ՏՀՏ տեխնոլոգիաներով օժանդակվող ծառայությունների առաջացման և նորարարությունների իրականացման համար, ինչպես նաև կխթանեն ՏՏ ոլորտի զարգացումը Հայաստանում: Իրականացման ժամկետ. 2011-2015 թթ.

Նախագիծ 6. *
Հայկական ազգային
ճարտարագիտական
լաբորատորիաներ
(ԷլԷՆԻԷլ)
(Կրթություն)

Նախագծի նպատակն է հիմնել ճարտարագիտական գերժամանակակից գիտակրթական լաբորատորիաների համալիր Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի կազմում: Նախագծի իրականացմանն աջակցում է չափագիտական սարքավորումների արտադրության ոլորտում առաջատար ամերիկյան «Նեյշընըլ Ինսթրումենթս» ընկերությունը: Նախագծի արդյունքում ակնկալվում է ճարտարագիտական կրթության որակի կտրուկ բարելավում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Ժամկետներ. հիմնադրում 1 տարվա ընթացքում

Նախագիծ 7. *
Ազատ տնտեսական գոտիներ «Արաբկիր» (Մերգեյյան ինստիտուտ), «Մալաթիա» (Մարս գործարան) (Ֆիզիկական ենթակառուցվածք)

Նախատեսվում է Ազատ տնտեսական գոտիների մասին օրենքի ընդունում, որով կսահմանվեն ազատ տնտեսական գոտիների գործունեության սկզբունքները և կանոնները, կսահմանվեն հարկային արտոնություններ այդ գոտիներում գործող ընկերությունների համար: Բարձր տեխնոլոգիաների բնագավառում նախատեսվում է հիմնել «Արաբկիր» գիտահետազոտական կենտրոնը նախկին Մերգեյյան ինստիտուտի և «Մալաթիա» արտահանման ուղղվածությամբ արտադրական ազատ տնտեսական գոտին Մարս գործարանի տարածքներում Սիտրոնիկս ընկերության կողմից:

Նախագիծ 8. *
Գյումրի տեխնոպարկ (Ֆիզիկական ենթակառուցվածք)

Նախատեսվում է Գյումրիում ստեղծել ժամանակակից տեխնոպարկ, որը աջակցի տարածաշրջանում նորարարական ընկերություններին: Այն ունենալու է շուրջ 5.000 ք.մ. վերանորոգված տարածք ընկերությունների վարձակալության համար, անհրաժեշտ ենթակառուցվածք տեխնոլոգիական ընկերությունների համար (ճարտարագիտական լաբորատորիաներ, ուսումնական դասասենյակներ և այլն) վերապատրաստված կառավարչական թիմ և տեխնոլոգիաների ընդլայնման շրջանակներում աջակցություն է տրամադրելու տարածաշրջանի ընկերություններին:

Նախագիծ 9. *
Մայքրոտեխնոլոգիայի նորարարական կենտրոն (Ֆիզիկական ենթակառուցվածք)

Հայաստան Մայքրոտեխնոլոգիայի կենտրոնը, որը հիմնադրվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՅուԷսԷյԱյԴի), Մայքրոտեխնոլոգիայի և Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի կողմից և տեղակայվում է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում: Որդեգրելով իր ընդհանուր գործունեության մեջ ինովացիոն և արդյունավետ մոտեցում՝ Մայքրոտեխնոլոգիայի կենտրոնի նպատակն է աջակցել փոքր և միջին ՏՏ ձեռնարկություններին ձևավորելու հիմնարար գիտելիքներ և փորձառություն գործարար, տեխնիկական և կառավարման անհատներին տարբեր ոլորտներում: Կենտրոնը կաջակցի ինովացիոն նախագծերի իրականացմանը, ինչպես նաև կաջակցի ուսումնական հաստատություններին մատուցելու շուկայի ներկա և ապագա պահանջարկը բավարարող նոր գիտելիքներ:

<p>Նախագիծ 10.* Վենչուրային հիմնադրամ (Ֆինանսական ենթակառուցվածք)</p>	<p>Համաշխարհային բանկի «Հայաստանի էլեկտրոնային հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ծրագրի շրջանակում նախատեսվում է հիմնել վենչուրային հիմնադրամ, որի նպատակն է ֆինանսական ներդրումների իրականացումը հեռանկարային նորարարական ընկերություններում:</p>
<p>Նախագիծ 11.* Գաղափարների և նորարարությունների համաֆինանսավորման դրամաշնորհներ (Ֆինանսական ենթակառուցվածք)</p>	<p>Գաղափարների և Նորարարությունների համաֆինանսավորման դրամաշնորհները նախատեսված են նորարարություն իրականացնող ձեռնարկությունների և հետազոտական խմբերի առևտրային տեսանկյունից կենսունակ ծրագրերը բացահայտելու և դրանք հետագա ներդրումների համար հասուն նախագծեր դարձնելու համար:</p>
<p>Նախագիծ 12.* ԱՄՆ «Միլիկոնյան հովտում» վաճառքի գրասենյակ (Բիզնես կարողություններ)</p>	<p>Նպատակային շուկայում գործող ներկայացուցչության միջոցով նախատեսվում է օժանդակել SS ոլորտի և բարձր տեխնոլոգիական ընկերություններին վաճառքի նոր պատվերների և ներդրումային համաձայնությունների ձեռք բերմանը, որոնք հնարավորություն կստեղծեն Հայաստանի SS/գիտելիքահենք ընկերությունների համար հետագա ներդրումների և արտահանման ընդլայնման համար:</p>
<p>Նախագիծ 13.* Արտադրողականության և բարձրացում և հմտությունների զարգացում (Բիզնես կարողություններ)</p>	<p>Համաշխարհային բանկի «Հայաստանի էլեկտրոնային հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ծրագրով հմտությունների զարգացման գործունեության շրջանակներում ուսուցման և հավաստագրման հնարավորությունների ստեղծումը Հայաստանի աշխատուժին և բուհերի շրջանավարտներին ուսուցանելու/վերապատրաստելու հնարավորություն է ընձեռում: Ավելին, Արտադրողականության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է, որ ընկերությունները կհավաստագրվեն ըստ միջազգային չափանիշների:</p>

* Նախագծերի ֆինանսավորման մեծությունը, ինչպես նաև պերսոնալիտետի հնարավոր համաֆինանսավորման չափը կորոշվի համապատասխան ծրագրերի իրականացման շրջանակում

10. Հենքային փաստաթղթերի ցանկ

1. ՀՀ օրենքը ազատ տնտեսական գոտիների մասին (սախագիծ)
2. Միտրոնիքս ընկերության ներկայացումը “Արաբկիր” և “Մալաթիա” ազատ տնտեսական գոտիների վերաբերյալ
3. Gyumri Technopark Strategic Roadmap and Business Plan, by Kevin Thompstone, December 2008 (English and Armenian version)
4. Gyumri Technocity From Strategy to Implementation FINAL REPORT, by Kevin Thompstone, September 2010
5. Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2020թթ), Կառավարության որոշման սախագիծ, 2010թ.
6. Creating a Regional Center of Excellence in Oncology – An Investment Opportunity, Investor Memo, National Competitiveness Foundation of Armenia, July 2010
7. Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ծրագիր, 2010թ.
8. Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղծելու ծրագրին հավանություն տալու, «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի 310-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության 7 հոկտեմբերի 2010 թվականի N 1424 -Ն որոշում
9. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտում» իզոտոպների արտադրության և միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման աշխատանքային խումբ ստեղծելու մասին ՀՀ Վարչապետի որոշում, 2009թ. մայիսի 7, թիվ N 375-Ա
10. “Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ” պետական ոչ առևտրային կազմակերպությունը “Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա” պետական ոչ առևտրային կազմակերպություն վերանվանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի n 98 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 17-ի N 758 -Ն որոշում
11. «Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ուղղությունների վերաբերյալ զեկույցին հավանություն տալու մասին Կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, 17 հունիսի 2010 թվականի N 23
12. О структуре и характере работы системы управления Национальной Научной Лаборатории им. А.И. Алиханяна
13. “Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ” պետական ոչ առևտրային կազմակերպության հեռանկարային զարգացման ուղղությունները որոշելու, ինստիտուտի կառավարման բարեփոխումներն իրականացնելու և գիտական հետազոտությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով փորձագիտական հանձնաժողով ստեղծելու մասին ՀՀ Վարչապետի որոշումը, 2009թ. մայիսի 20, N 416-Ա
14. Conclusion and recommendations of International Commission of Experts on strategic development of the Yerevan Physics Institute after A.I. Alikhanyan
15. Project Appraisal Document on a Proposed Loan to the Government of Armenia for a E-Society and Innovation for Competitiveness PROJECT (EIC), The World Bank, September 18
16. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2009, Տնտեսություն և արժեքներ, 2010թ.
17. Ճարտարագիտական սախագծման ոլորտի հետազոտություն և իրագործելիության ուսումնասիրություն, “Տնտեսություն և արժեքներ” հետազոտական կենտրոն, 2010թ.
18. Armenian National Innovation Strategy, Kevin X. Murphy, J.E. Austin Associates, Inc., April 2010, CAPS
19. CANDLE Project Business Plan, EV Consulting, 2009